Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 16-05-2026 թ. որոշմամբ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2025 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ - ՀԱՅԱՍՏԱՆ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ, ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ, Աբովյան փող., 52
1.3 Պետական գրանցման համարը		222.160.775992
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2013-07-16
1.5 ՀՎՀՀ-ն		02619914
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)55181255
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.crrc.am
1.8 Էլեկտրոնային փոստը		crrc@crrc.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	6	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Կարնեգի հիմնադրամ. կայունության աջակցության դրամաշնորհ	31,211,505
	Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութիւն. «Հայաստանի զարկերակը. միահյուսելով տվյալները արվեստին»	4,864,770
	(Վերա)իմաստավորելով հարցումները. հանրային կարծիքի համադիտարկում	2,431,446
	Չկոնֆերանս հանուն կանանց մասնակցության. խոսել և գործել	427,077

	Ձեռնարկատիրական գործունեությունից մուտքեր	224,573,209
	Բանկերից տոկոսային եկամուտ	63,648
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Նվիրատվություն	483,006
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Կարնեգի հիմնադրամ. կայունության աջակցության դրամաշնորհ	34,886,879	
Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւն. «Հայաստանի զարկերակը. միահյուսելով տվյալները արվեստին»	5,047,219	
(Վերա)իմաստավորելով հարցումները. հանրային կարծիքի համադիտարկում	388,000	
ԵՄ համայնքային աղքատության հաղթահարման փորձառություն	5,221,304	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	256,322,560	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	45,543,402	

Նշումներ՝

Ձեռնարկատիրական գործունեությունից մուտքերի գծով ծախսը կազմել է 172 397 598 (մեկ հարյուր յոթանասուներկու միլիոն երեք հարյուր իննսունյոթ հազար հինգ հարյուր իննսունութ) ՀՀ դրամ:

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 35 էջերից:

Հիմնադրամի տնօրեն _____ Լիլիթ Եզեկյան

ստորագրությունը, անունը, ազգանունը

ՀԻՄՆԱԴՐԱՄ ՖՈՆԴ FOUND ATION 02619914

«ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ - ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Հոգաբարձուների խորհրդի կազմը՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Գործունեության մասին հաշվետվություն	8
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն - Հայաստան»
Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն - Հայաստան» Հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա գործունեության մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագրքի»* (Մասնագիտական էթիկայի կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Trust Audit CJSC is a member of JPA INTERNATIONAL
Trust Audit CJSC
321 office, 8 str. Tumanyan
0001 Yerevan, Armenia
Tel: +374(10) 516111
Email: info@trustaudit.am
www.trustaudit.am

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի

Trust Audit CJSC is a member of JPA INTERNATIONAL
Trust Audit CJSC
321 office, 8 str. Tumanyan
0001 Yerevan, Armenia
Tel: +374(10) 516111
Email: info@trustaudit.am
www.trustaudit.am

անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Թրասթ Աուդիտ» ՓԲԸ
տնօրեն Հայկ Մարգարյան

Առաջադրանքի պատասխանատու
Լիլիթ Կատոյան

7 մայիսի 2026թ.
ք. Երևան

Trust Audit CJSC is a member of JPA INTERNATIONAL
Trust Audit CJSC
321 office, 8 str. Tumanyan
0001 Yerevan, Armenia
Tel: +374(10) 516111
Email: info@trustaudit.am
www.trustaudit.am

Հոգաբարձուների խորհրդի կազմը՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Մերի Շիհան
Խորհրդի նախագահ
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (պաշտոնաթող)

Ահարոն Չիլինգարյան
Աուդիտի և ֆինանսների գծով հանձնաժողովի նախագահ
Գործընկեր, հարկային, իրավաբանական և առևտրի ծառայությունների բաժնի ղեկավար, ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա

Ուիլյամ Հանլոն
ՅՈՒՆԻՍԵՖ-ի Սուխումի գրասենյակի ղեկավար

Դեանա Արսենյան
Նյու Յորքի Քարնեգի կորպորացիայի փոխնախագահ (պաշտոնաթող)

Հորթեն Բիիբի–Սենթեր
Եվրասիա հիմնադրամի նախկին նախագահ

Թալար Կազանջյան
Աֆեյան նախաձեռնություններ Հայաստանի համար, գործադիր տնօրեն

Եվա Ավակյան
Սեյվ դը Չիլդրն (ԱՄՆ) գենդերային հավասարություն, փոխնախագահի տեղակալ (պաշտոնաթող)

«Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն - Հայաստան» Հիմնադրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

		Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	Ծնթ.	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ					
Ոչ ընթացիկ ակտիվներ					
Հիմնական միջոցներ	5	245,863	254,163	644,701	640,919
Ոչ նյութական ակտիվներ		1,922	1,195	5,040	3,013
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**247,785**	**255,358**	**649,741**	**643,932**
Ընթացիկ ակտիվներ					
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	6	1,901	7,282	4,985	18,363
Անավարտ ծառայություններ		293	1,803	768	4,547
Դրամական միջոցներ	7	13,375	123	35,072	310
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**15,569**	**9,208**	**40,825**	**23,220**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**263,354**	**264,566**	**690,566**	**667,152**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ					
Ոչ ընթացիկ պարտավորություններ					
Ակտիվներին վերաբերող շնորհներ	8	6,244	6,390	16,373	16,114
Հետաձգված հարկային պարտավորություն	9	3,213	-	8,425	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**9,457**	**6,390**	**24,798**	**16,114**
Ընթացիկ պարտավորություններ					
Կրեդիտորական և այլ պարտավորություններ	10	16,581	27,860	43,479	70,254
Հետաձգված եկամուտ	11	-	1,354	-	3,414
Փոխառություններ	12	-	13,600	-	34,295
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**16,581**	**42,814**	**43,479**	**107,963**
Զուտ ակտիվներ	13				
Կուտակված արդյունք (անսահմանափակ)		237,316	215,362	493,394	436,639
Արտարժույթի փոխարկման պահուստ		-	-	128,895	106,436
Ընդամենը զուտ ակտիվներ		**237,316**	**215,362**	**622,289**	**543,075**
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ		**263,354**	**264,566**	**690,566**	**667,152**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026 թվականի մայիսի 7-ին:

Գործադիր տնօրեն
Լիլիթ Եզեկյան

«Սմարտ էյէմ» ՍՊԸ հարկային մասնագետ, գլխավոր խորհրդատու
Աննա Գրիգորյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

		Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	Ծնթ.	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Շնորհներից եկամուտ	14	37,201	77,166	96,172	196,523
Ծառայությունների մատուցումից եկամուտ	15	220,927	150,509	571,141	383,310
Ֆինանսական զուտ եկամուտ		64	50	165	127
Այլ եկամուտ		2,863	109	7,401	278
Ընդամենը եկամուտներ		**261,055**	**227,834**	**674,880**	**580,237**
Հատուցումներ աշխատակիցներին		(40,283)	(96,425)	(104,140)	(245,571)
Ծառայությունների գծով հատուցումներ		(47,228)	(32,081)	(122,094)	(81,702)
Վերլուծական և հետազոտական աշխատանքներ, կրթաթոշակների գծով ծախսեր		(100,668)	(59,731)	(260,247)	(152,120)
Խորհրդատվական ծառայություններ		(9,200)	(12,086)	(23,784)	(30,780)
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր		(2,675)	(6,157)	(6,915)	(15,680)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		(9,654)	(9,560)	(24,958)	(24,347)
Մաշվածություն և ամորտիզացիա		(8,645)	(9,120)	(22,349)	(23,226)
Բանկային և ապահովագրական ծախսեր		(1,490)	(2,594)	(3,852)	(6,606)
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր		(2,592)	(2,001)	(6,701)	(5,096)
Տրանսպորտային միջոցների վարձակալության ծախսեր		(1,963)	(7,226)	(5,075)	(18,403)
Այլ ծախսեր		(3,073)	(5,398)	(7,944)	(13,747)
Փոխարժեքային տարբերությունից զուտ վնաս		(716)	(1,434)	(1,851)	(3,652)
Ընդամենը ծախսեր		**(228,187)**	**(243,813)**	**(589,910)**	**(620,932)**
Արդյունք մինչև հարկերը		**32,868**	**(15,979)**	**84,970**	**(40,695)**
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	16	(10,914)	1,762	(28,215)	4,487
Տարվա արդյունք		**21,954**	**(14,217)**	**56,755**	**(36,207)**

Գործունեության մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

«Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն - Հայաստան» Հիմնադրամ
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Հազար դրամ			ԱՄՆ դոլար	
	Կուտակված արդյունք (անսահմանափակ)	Ընդամենը	Արտարժույթի վերագնահատման պահուստ	Կուտակված արդյունք (անսահմանափակ)	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**229,579**	**229,579**	**94,309**	**472,846**	**567,155**
Տարվա արդյունք և համապարփակ եկամուտ	(14,217)	(14,217)	-	(36,207)	(36,207)
Ֆինանսական հաշվետվությունների վերաչափումից փոխարժեքային տարբերություններ	-	-	12,127	-	12,127
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**215,362**	**215,362**	**106,436**	**436,639**	**543,075**
Տարվա արդյունք և համապարփակ եկամուտ	21,954	21,954	-	56,755	56,755
Ֆինանսական հաշվետվությունների վերաչափումից փոխարժեքային տարբերություններ	-	-	22,459	-	22,459
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**237,316**	**237,316**	**128,895**	**493,394**	**622,289**

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

«Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն - Հայաստան» Հիմնադրամ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2025թ. դեկտեմբեր ի 31-ին ավարտվա ծ տարի	2024թ. դեկտեմբեր ի 31-ին ավարտվա ծ տարի	2025թ. դեկտեմբեր ի 31-ին ավարտվա ծ տարի	2024թ. դեկտեմբեր ի 31-ին ավարտվա ծ տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր				
Որպես շնորհ ստացված դրամական միջոցներ	36,076	69,124	93,264	176,042
Ծառայությունների մատուցումից մուտքեր	225,000	129,266	581,671	329,209
Այլ մուտքեր	4,710	152	12,176	387
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(41,943)	(80,657)	(108,431)	(205,413)
Վճարումներ ծառայություն մատուցողներին և նրանց անունից	(47,207)	(29,425)	(122,040)	(74,938)
Վճարումներ մատակարարներին և նրանց անունից	(137,519)	(94,085)	(355,515)	(239,611)
Վճարումներ վարձակալության գծով	(1,343)	(3,358)	(3,472)	(8,552)
Վճարված հարկեր և այլ պարտադիր վճարներ՝ բացի շահութահարկից	(7,208)	(140)	(18,634)	(357)
Վճարված շահութահարկ	(1,060)	-	(2,740)	-
Այլ վճարումներ	(1,339)	(1,159)	(3,462)	(2,952)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**28,167**	**(10,282)**	**72,817**	**(26,185)**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր				
Հիմնական միջոցների և այլ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերումից ելքեր	(1,073)	(690)	(2,774)	(1,758)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(1,073)**	**(690)**	**(2,774)**	**(1,758)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր				
Փոխառությունների ստացում	3,730	30,735	9,643	78,275
Փոխառությունների մարում	(17,330)	(19,213)	(44,802)	(48,931)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(13,600)**	**11,522**	**(35,159)**	**29,344**
Դրամական միջոցների զուտ հոսք	**13,494**	**550**	**34,885**	**1,401**
Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ դրամական միջոցներ	123	398	310	983
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(242)	(825)	(123)	(2,073)
Ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամական միջոցներ	**13,375**	**123**	**35,072**	**310**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն - Հայաստան» Հիմնադրամն (Հիմնադրամ) անկախ վերլուծական-ուսումնական կենտրոն է, որի նպատակն է ներազդել Հայաստանում հանրային քաղաքականության ու որոշումների ընդունման վրա՝ Հայաստանում և Հարավային Կովկասում հետազոտությունների և հասարակական գիտությունների խթանման միջոցով:

Հիմնադրամը հիմնադրվել է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից, որն իր հերթին հիմնադրվել է ԱՄՆ ոչ առևտրային կազմակերպություն հանդիսացող Եվրասիա հիմնադրամի կողմից: Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2013թ. հուլիսի 16-ին:

Հիմնադրամն առաջարկում է քանակական և որակական հետազոտությունների արդյունքում ստացված բաց և հասանելի տվյալներ, մեթոդաբանական և կողմնորոշիչ դասընթացներ, դասախոսություններ, հետազոտական փոքր դրամաշնորհներ, ինչպես նաև գրադարանից օգտվելու հնարավորություն:

Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը 2025 թվականին կազմել է 6 մարդ, իսկ քաղիրավական պայմանագրերով աշխատողներինը՝ 12 մարդ:

2024 թվականին աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 13 մարդ, իսկ քաղիրավական պայմանագրերով աշխատողներինը՝ 14 մարդ:

Հիմնադրամի գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Աբովյան փող., 52:

Հիմնադրամի գործունեության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Տիգրան Մեծի պող., 47/1:

2. Գործարար միջավայր

Հայաստանի Հանրապետությունում գործարար միջավայրը շարունակում է ձևավորվել արտաքին և տարածաշրջանային զարգացումների պայմաններում: Տարածաշրջանային անվտանգության իրավիճակը և աշխարհաքաղաքական գործոնները կարող են պահպանել որոշակի անորոշություն և ազդեցություն ունենալ տնտեսական ակտիվության, շուկաների կայունության և գործարար կապերի վրա: Միևնույն ժամանակ, տարածաշրջանում իրականացվում են բանակցային գործընթացներ՝ ուղղված լարվածության նվազեցմանը և երկարաժամկետ կայունության ապահովմանը, սակայն դրանց արդյունքների և ժամկետների վերաբերյալ առկա է անորոշություն:

Ղեկավարությունը հետևում է զարգացումներին և գնահատում է, որ հաշվետու ամսաթվի դրությամբ հնարավոր չէ վստահելի կերպով քանակապես գնահատել վերոնշյալ հանգամանքների ամբողջական ազդեցությունը Հիմնադրամի գործունեության, ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի վրա՝ պայմանավորված իրադարձությունների շարունակականությամբ և գործոնների բազմազանությամբ: Տնտեսական և քաղաքական միջավայրի հետագա զարգացումները և դրանց ազդեցությունը Հիմնադրամի վրա կարող են տարբերվել ղեկավարության ներկայիս սպասումներից: Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում վերոնշյալ հանգամանքներից բխող հնարավոր ապագա ազդեցությունների համար որևէ ճշգրտումներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք պահանջվում են կիրառելի հաշվապահական ստանդարտներով:

3. Պատրաստման հիմունքներ

3.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային

ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»*

3.2 Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով և ԱՄՆ դոլարով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթներն առավել օգտակար են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Ծանոթագրություններում բացահայտված որոշ տեղեկատվություն ներկայացված է միայն դրամով: Նման դեպքերում օգտագործողները պետք է հետևեն ծանոթագրություն 4.1-ին՝ համապատասխան տեղեկատվությունը ԱՄՆ դոլարով ստանալու համար:

Դրամով ներկայացված ֆինանսական հաշվետվություններն ԱՄՆ դոլարով վերահաշվարկման քաղաքականությունը ներկայացված է ծանոթագրություն 4.1-ում:

3.4 Անընդհատություն

Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են, ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում, և որ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում գործունեությունը դադարեցնելու կամ էական կրճատելու մտադրություն կամ անհրաժեշտություն չկա:

3.5 Գնահատումների և դատողությունների օգտագործում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

3.6 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ առկա ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

ՖՀՄՍ 7 «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ» - Բացահայտումներ

ՖՀՄՍ 7-ում կատարված խմբագրումը պահանջում է բացահայտել իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքով չափվող բաժնային գործիքների իրական արժեքով վերաչափումներից այլ համապարփակ եկամուտներ և ծախսերը՝ առանձնացնելով այն մասը որը վերաբերում է ընթացիկ ժամանակաշրջանում ապաճանաչված ակտիվներին։

Նաև պահանջվում է առանձին բացահայտել ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև պարտադիր այլ համապարփակ ֆինանսական արդյունքով չափվող ֆինանսական ակտիվների գծով պայմանագրային այն պայմանները, որոնց պատճառով կարող են փոփոխվել պայմանագրային հոսքերի գումարները և ժամկետները, և որոնք հանդիսանում են պայմանական դեպքեր և ուղղակի կապված չեն բազային պարտքային համաձայնագրի ռիսկի և արժեքի փոփոխության հետ։

ՖՀՄՍ 7-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար։

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» - Բնությունից կախված էլեկտրաէներգիայի պայմանագրերի

Համաձայն կատարված խմբագրման ՀՀՄՍ 9-ի գործողության ոլորտում կարող են ներառվել բնական երևույթներից կախված և դրանց շնորհիվ արտադրված էլեկտրաէներգիայի (օրինակ հողմային էլեկտրակայանների կողմից արտադրված) ձեռքբերման կամ վաճառքի ածանցյալ պայմանագրերը, եթե ձեռբերողը պարտավոր է հետ վաճառել էլեկտրաէներգիայի այն ծավալը, որը չի կարող օգտագործել։

Նաև թույլատրվում է էլեկտրակայանին նման պայմանագրերը դասակարգել որպես հեջավորման գործիք, եթե հեջավորված հոդվածը ածանցյալ պայմանագրին համահունչ պայմաններով սպասվող իրացումն է։

ՖՀՄՍ 9-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար։

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» - Առևտրային դեբիտորական պարտքերի չափումը

ՖՀՄՍ 9-ում կատարված խմբագրմամբ պարզաբանվում է որ առևտրային դեբիտորական պարտքերը ճանաչման պահին պետք է չափվեն այն արժեքով, որը որոշվել է կիրառելով ՖՀՄՍ 15 «Հասույթ գնորդների հետ պայմանագրերից» հաշվապահական ստանդարտը։

ՖՀՄՍ 9-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար։

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» - Վարձակալության գծով պարտավորությունների ապաճանաչում

ՖՀՄՍ 9-ում կատարված լրացմամբ հստակեցում է որ ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման պահին հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման միջև տարբերությունը շահույթում կամ վնասում ճանաչելու պահանջը պետք է կիրառել նաև վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ։

ՖՀՄՍ 9-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար։

ՖՀՄՍ9 «Ֆինանսական գործիքներ» - Էլեկտրոնային վճարային համակարգով մարված ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը

Էլեկտրոնային վճարման համակարգի միջոցով ֆինանսական պարտավորությունների մարման դեպքում պարտավորությունը թույլատրվում է ապաճանաչել վճարման պահին, եթե վճարողը չի կարող չեղարկել, դադարեցնել կամ հետ կանչել վճարումը։

ՖՀՄՍ 9-ի այս փոփոխությունն ուժի մեջ են մտնում 2026թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար։

ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվություններում ներկայացումը և բացահայտումը»

2024թ.-ին թողարկվել է ՖՀՄՍ 18 հաշվապահական ստանդարտը, որը վերաբերում է ֆինանսական հաշվետվությունների ներկայացմանը և փոխարինում է «ֆինասական հաշվետվությունների ներկայացումը» ՀՀՄՍ 1-ին:

Նշանակալի փոփոխության է ենթարկվել շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ներակայացման ենթակա տեղեկատվության բովանդակությունը, որտեղ պահանջվում է ներկայացնել եկամուտներն ու ծախսերը ըստ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, շահութահարկ և ընդհատված գործառնություններ բաժինների:

ՖՀՄՍ 18-ը ուժի մեջ են մտնում 2027թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ 19 «Հանրային հաշվետվողականություն չունեցող դուստր ընկերություններ. բացահայտումներ»

2024թ.-ին թողարկվել է ՖՀՄՍ 19 հաշվապահական ստանդարտը, որը հնարավորություն է տալիս հանրային հաշվետվողականություն չունեցող կազմակերպությունների, որոնք նաև հանդիսանում են ՖՀՄՍ-ների համապատասխան հրապարակվող ֆինանսական հաշվետվություններ ներկայացնող կազմակերպության դուստր ընկերություն, ներկայացնել ավելի պակաս բացահայտումներ քան պահանջվում են այլ ՖՀՄՍ-ներով:

ՖՀՄՍ 19-ի կիրառումը պարտադիր չէ և նշված պայմաններին բավարարող կազմակերպությունը կարող է այն կիրառել մեկ հաշվետու ժամանակաշրջանում և հրաժարվել դրա կիրառումից մեկ այլ ժամանակաշրջանում:

ՖՀՄՍ 19-ը ուժի մեջ են մտնում 2027թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՍ21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» - Վերահաշվարկումը գերսղաճային տնտեսության արժույթով

Եթե ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը գերսղաճային տնտեսության արժույթ է, իսկ ֆունկցիոնալ արժույթը ոչ, ապա ֆինանսական հաշվետվությունները՝ և արդյունքները և ֆինանսական վիճակը, պետք է վերահաշվարկվեն վերջին հաշվետու ժամանակաշրջանի փակման փոխարժեքով:

ՀՀՄՍ 21-ի այս փոփոխությունը ուժի մեջ են մտնում 2027թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

4.1 Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում:

Արտարժույթ	*31.12.2025թ*	*31.12.2024թ*
1 Եվրո	449.01 դրամ	413.89 դրամ

1 ԱՄՆ դոլար	381.36 դրամ	396.56 դրամ

Ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումն այլ արժույթով

Հիմնադրամի ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են դրամից ԱՄՆ դոլարի՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքով: Եկամտային և ծախսային հոդվածները վերահաշվարկվում են ԱՄՆ դոլարի՝ օգտագործելով ժամանակաշրջանի միջին փոխարժեքը: Փոխարժեքային տարբերությունների արդյունքը գրանցվում է անմիջապես զուտ ակտիվներում՝ արտարժույթի փոխարկման պահուստում:

4.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է տարվա արդյունքում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են տարվա արդյունքում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է տարվա արդյունքում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	- 50 տարի
Համակարգչային տեխնիկա և սարքավորումներ	- 1-5 տարի
Տնտեսական գույք և այլ	- 5-8 տարի

4.3 Վարձակալված ակտիվներ

Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են որպես ծախս գծային հիմունքով: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության ծախսերը, ծախսագրվում են իրականացման պահին:

4.4 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթական չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Հիմնադրամի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են տարվա արդյունքում, արտացոլված են ֆինանսական ծախսերում կամ ֆինանսական եկամուտում, բացառությամբ ժամկետային ավանդների արժեզրկման և արժեզրկման հակադարձման, որոնք արտացոլվում են առանձին: Հիմնադրամի ֆինանսական ակտիվներ, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 18-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Հիմնադրամի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Սպասվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են ամորտիզացված արժեքով չափվող ժամկետային ավանդները և դեբիտորական պարտքերը:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Հիմնադրամի՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից։ Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Հիմնադրամը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները,որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա։

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Հիմնադրամը հաշվառում է իր ֆինանսական ակտիվները (դեբիտորական պարտքերը և ժամկետային ավանդները)՝ օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ։ Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը։ Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Հիմնադրամն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից։

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են կրեդիտորական պարտքերը։ Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 18-ում։

Առեվտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առեվտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով։

4.5 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամական միջոցները, բանկային հաշիվների մնացորդները, դրամական միջոցները՝ ճանապարհին և կարճաժամկետ ավանդները՝ 3 ամսից պակաս մարման ժամկետով։

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ։ Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով։ Հիմնադրամը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ։

4.6 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է։

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են տարվա արդյունք՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում։

Շնորհները, որոնք ստացվել են դոնորների կողմից որպես առանց նախապայմանների ֆինանսական օգնության կամ որպես կրած ծախսերի կամ վնասների փոխհատուցում, ճանաչվում են տարվա արդյունքում, երբ դրանք դառնում են ստացման ենթակա։

Շնորհները, որոնք ստացվել են դոնորների կողմից, սակայն հաշվետու ամսաթվի դրությամբ չեն օգտագործվել ըստ նպատակայնության, ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հետաձգված եկամուտ (ընթացիկ պարտավորություն) և սիստեմատիկորեն փոխանցվում են տարվա արդյունք՝ այդ շնորհների օգտագործմանը զուգընթաց:

Ստացված շնորհների գծով ամբողջ եկամուտը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հետաձգված եկամուտ, երբ այն դառնում է ստացման ենթակա, այսինքն՝ այն պահին, երբ Հիմնադրամը ստորագրում է իրավական պայմանագիր: Հետաձգված եկամուտը փոխանցվում է գործունեության մասին հաշվետվություն՝ շնորհին կից պայմանների իրականացմանը զուգընթաց: Ընդ որում, եթե հետաձգված եկամտի գումարը գերազանցում է Հիմնադրամի կողմից շնորհին կից պայմանների իրականացման համար պահանջվող գումարը, գերազանցող մասը նվազեցվում է հետաձգված եկամտի մնացորդից և համապատասխան դոնորի գծով դեբիտորական պարտքի մնացորդից: Այս ճշգրտման գումարը չի արտացոլվում գործունեության մասին հաշվետվությունում:

Հիմնադրամն իր ֆինանսական հաշվետվություններում չի ճանաչում դոնորներից ստացված գումարները, որոնք հետագայում պետք է փոխանցվեն համաշահառուներին, երբ այդ դրամաշնորհի օգտագործումը չի վերահսկվում Հիմնադրամի կողմից:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհների ճանաչման և հաշվառման ժամանակ Հիմնադրամի ղեկավարությունը կիրառել է դատողություններ, որոնք նկարագրված են ծանոթագրություն 17-ում:

4.7 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող արդյունքի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական արդյունքի, ոչ էլ՝ հարկվող արդյունքի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Հիմնադրամը կստանա բավարար հարկվող արդյունք, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Հիմնադրամը հաշվետու ամսաթվի

դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

4.8 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցում են ծառայություններ, Հիմնադրամն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչվում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Հիմնադրամը պետք է ճանաչի

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ,երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Հիմնադրամն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

4.9 Եկամուտ

Եկամուտը ձևավորվում է հիմնականում ծառայությունների մատուցումից և շնորհներից ստացված եկամուտից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել եկամուտ, թե ոչ, Հիմնադրամն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1. Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
2. Բացահայտել կատարման պարտականությունները
3. Որոշել գործարքի գինը
4. Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
5. Ճանաչել եկամուտը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Եկամուտը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Հիմնադրամը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը։

Հիմնադրամը ճանաչում է անբավարար կատարման պարտականությունների դիմաց ստացված հատուցման գծով պայմանագրային պարտավորությունները և այդ գումարները գրանցում է որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ կրեդիտորական պարտքեր տողում։ Նմանապես, եթե Հիմնադրամը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցում ստանալը, Հիմնադրամը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կա՛մ պայմանագրային ակտիվ, կա՛մ դեբիտորական պարտք կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման։

Ծառայությունների մատուցում

Ծառայությունների մատուցումից եկամուտը ներկայացնում է Հիմնադրամի կողմից տարբեր հետազոտությունների, վերլուծությունների, հարցումների գծով մատուցված ծառայությունները։ Այն ճանաչվում է պայմանագրային պարտավորությունների կատարմանը զուգընթաց՝ ըստ հաշվետու ամսաթվի դրությամբ դրանց ավարտվածության աստիճանի։

Հաշվետու ամսաթվի դրությամբ դեռևս չավարտված ծառայությունների հետ կապված բոլոր կատարված ծախսումների գումարներն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես «Անավարտ ծառայություններ»։

Շնորհներից եկամուտ

Այս եկամտի ճանաչման քաղաքականությունը ներկայացված է ծանոթագրություն 4.6-ում։

5. Հիմնական միջոցներ

	Հազար դրամ				ԱՄՆ դոլար			
	Շենքեր և շինություններ	Համակարգչային տեխնիկա	Տնտեսական գույք, այլ	**Ընդամենը**	Շենքեր և շինություններ	Համակարգչային տեխնիկա	Տնտեսական գույք, այլ	**Ընդամենը**
Սկզբնական արժեք								
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**248,527**	**25,346**	**25,421**	**299,294**	**613,965**	**62,614**	**62,802**	**739,381**
Ավելացում	-	271	-	**271**	-	690	-	**690**
Արտարժույթի փոխարկումից տարբերություն	-	-	-	**-**	12,742	1,294	1,302	**15,338**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**248,527**	**25,617**	**25,421**	**299,565**	**626,707**	**64,598**	**64,104**	**755,409**
Ավելացում	-	-	-	**-**	-	-	-	**-**
Արտարժույթի փոխարկումից տարբերություն	-	-	-	**-**	24,979	2,575	2,555	**30,109**
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**248,527**	**25,617**	**25,421**	**299,565**	**651,686**	**67,173**	**66,659**	**785,518**
Կուտակված մաշվածություն								
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**6,519**	**23,967**	**5,971**	**36,457**	**16,107**	**59,208**	**14,749**	**90,064**
Տարվա ծախս	4,973	938	3,034	**8,945**	12,665	2,389	7,727	**22,781**
Արտարժույթի փոխարկումից տարբերություն	-	-	-	**-**	207	1,205	232	**1,644**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**11,492**	**24,905**	**9,005**	**45,402**	**28,979**	**62,803**	**22,708**	**114,490**
Տարվա ծախս	4,973	294	3,033	**176**	12,856	760	7,841	**21,457**
Արտարժույթի փոխարկումից տարբերություն	-	-	-	**-**	1,339	2,514	1,017	**4,870**
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**16,465**	**25,199**	**12,038**	**53,702**	**43,174**	**66,077**	**31,566**	**140,817**
Հաշվեկշռային արժեք								
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**237,035**	**712**	**16,416**	**254,163**	**597,728**	**1,795**	**41,396**	**640,919**
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**232,062**	**418**	**13,383**	**245,863**	**608,512**	**1,096**	**35,093**	**644,701**

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի ամբողջությամբ մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմում է 25,924 հազար ՀՀ դրամ (2024թ.՝ 25,653 հազար ՀՀ դրամ):
Բանկային վարկային գիծն ապահովելու նպատակով Հիմնադրամը 2025թ. գրավադրել է իրեն պատկանող՝ Երևան քաղաքի Տիգրան Մեծի 47/1 հասցեում գտնվող թիվ 23 շինությունը, որի հաշվեկշռային արժեքը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 232,062 հազար ՀՀ դրամ (Տես. Ծնթ. 7):
Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամը վաճառքի համար պահվող, ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցներ չունի:

6. Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր ստացվելիք շնորհների գծով	-	1,670	-	4,211
Տրված կանխավճարներ	1,899	1,908	4,980	4,811
Այլ դեբիտորական պարտքեր	2	3,704	5	9,341
Ընդամենը	**1,901**	**7,282**	**4,985**	**18,363**

7. Դրամական միջոցներ

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	57	57	149	144
Ընթացիկ հաշիվներ բանկում	13,318	66	34,923	166
Ընդամենը	**13,375**	**123**	**35,072**	**310**

Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամի դրամական միջոցների նկատմամբ սահմանափակումներ առկա չեն:
2025 թվականի հոկտեմբերի 15-ին Հիմնադրամը կնքել է վարկային գծի պայմանագիր (թիվ-205002241490L001) բանկի հետ՝ 20,000,000 (քսան միլիոն) ՀՀ դրամ սահմանաչափով: Հաշվետու տարվա վերջի դրությամբ վարկային գծից միջոցներ չեն օգտագործվել, և հաշվեկշռում վարկային պարտավորություն չի ճանաչվել:

Դրամական միջոցների պարտքային որակը, որը հիմնված է պարտքային ռիսկի դասակարգերի վրա, 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գնահատվում է որպես Ba3՝ համաձայն MOODY՝S միջազգային վարկանշային գործակալության: Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ակնկալվող պարտքային կորուստներն էական չեն: Տե՛ս ծանոթ. 19՝ դրամական միջոցների արժույթների բացահայտման համար:

8. Ակտիվներին վերաբերող շնորհներ

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սկզբնական մնացորդ	**6,390**	**7,074**	**16,114**	**17,476**
Վերադասակարգում	997	290	2,614	731
Ֆինանսական արդյունքներում արտացոլված	(1,143)	(974)	(2,955)	(2,481)
Արտարժույթի փոխարկումից տարբերություն	-	-	600	388
Վերջնական մնացորդ	**6,244**	**6,390**	**16,373**	**16,114**

Ակտիվներին վերաբերող շնորհները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքում այն ժամանակաշրջանների ընթացքում և այն համամասնություններով, որոնք համապատասխանում են այդ ակտիվների մաշվածության և ամորտիզացիայի գծով ծախսերի ճանաչմանը:

Շնորհները ստացվել են տարբեր կազմակերպություններից և դրանց գծով չկան կցված և չկատարված պայմաններ և պարտականություններ:

9. Հետաձգված հարկային պարտավորություն

Հիմնադրամը ենթակա է որոշակի մշտական հարկային տարբերությունների, որոնք պայմանավորված են որոշակի ծախսերի՝ հարկային տեսանկյունից չնվազեցվող լինելու, ինչպես նաև որոշակի եկամուտների՝ հարկային տեսանկյունից չհարկվող համարվելու հետ:

Հետաձգված հարկերն իրենցից ներկայացնում են ֆինանսական հաշվառման և հարկային հաշվառման նպատակով օգտագործված՝ ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների միջև ժամանակավոր տարբերությունների զուտ հարկային հետևանքները:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ժամանակավոր տարբերություններն առավելապես իրենցից ներկայացնում են եկամուտների և ծախսերի ճանաչման տարբեր մեթոդներ/ժամկետներ, ինչպես նաև՝ հարկային հաշվառման մեջ որոշակի ակտիվների համար հարկվող բազայի գոյացման ժամանակավոր տարբերություններ: 2024 թվականի և հետագա հաշվետու ժամանակաշրջանների համար շահութահարկի կիրառելի դրույքաչափը կազմում է 18%: Հետևաբար, ստորև ներկայացված համեմատության նպատակով օգտագործվում է 18% դրույքաչափը.

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	**-**	**-**	**-**	**-**
Շահույթում կամ վնասում ճանաչված	(3,213)	-	(8,425)	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված	-	-	-	-
Տարեվերջի մնացորդ	**(3,213)**	**-**	**(8,425)**	**-**

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հետաձգված հարկային ակտիվներ				
Չօգտագործված արձակուրդային պահուստ	217	217	-	-
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	**217**	**217**	**-**	**-**
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Հիմնական միջոցներ	(3,430)	(3,430)		-
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	**(3,430)**	**(3,430)**	**-**	**-**
Զուտ արդյունք - հետաձգված հարկային պարտավորություններ	**(3,213)**	**(3,213)**	**-**	**-**

ԱՄՆ դոլար	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հետաձգված հարկային ակտիվներ				
Չօգտագործված արձակուրդային պահուստ	561	561	-	-
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	**561**	**561**	**-**	**-**
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Հիմնական միջոցներ	(8,867)	(8,867)	-	-
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	**(8,867)**	**(8,867)**	**-**	**-**
Արտարժույթի փոխարկումից տարբերություն	**442**	442	**-**	**-**
Զուտ արդյունք - հետաձգված հարկային պարտավորություններ	**(8,425)**	**(8,425)**	**-**	**-**

10. Կրեդիտորական և այլ պարտավորություններ

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	2,157	3,447	5,656	8,692
Պարտավորություններ պետական բյուջեին	8,747	9,342	22,936	23,558

Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	1,782	4,276	4,673	10,783
Կրեդիտորական պարտքեր ծառայություն մատուցողներին	2,690	1,424	7,054	3,591
Չօգտագործված արձակուրդայինի գծով պահուստ	1,205	4,189	3,160	10,563
Այլ	-	5,182	-	13,067
Ընդամենը	**16,581**	**27,860**	**43,479**	**70,254**

Կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Հիմնադրամն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Բոլոր գումարները կարճաժամկետ են:

11. Հետաձգված եկամուտ

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սկզբնական մնացորդ	**1,354**	**8,025**	**3,414**	**19,825**
Ավելացում	35,701	55,107	92,294	140,344
Սպասվելիք շնորհներ	-	1,670	-	4,253
Վերադասակարգում	(997)	12,744	(2,614)	32,136
Ֆինանսական արդյունքներում արտացոլված	(36,058)	(76,192)	(93,217)	(194,042)
Արտարժույթի փոխարկումից տարբերություն	-	-	123	898
Վերջնական մնացորդ	**-**	**1,354**	**-**	**3,414**

Ավելացումները ներկայացնում են հետևյալ կազմակերպություններից ստացված միջոցները՝

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եվրասիա Հիմնադրամ	31,212	34,307	80,689	87,372
Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամ	4,489	8,249	11,605	21,008
«ՕքսԵՋԵՆ» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամ	-	8,115	-	20,667
Միջազգային հարաբերությունների ազգային ժողովրդավարական ինստիտուտ	-	392	-	998
ԱՄՆ ՄԶԳ/ԱՌԱ/Մասնագետների զարգացման միավորում	-	1,929	-	4,913
«Կանանց Զարգացման Հիմնադրամ» ՀԴ	-	2,115	-	5,386
Ընդամենը	**35,701**	**55,107**	**92,294**	**140,344**

Սպասվելիք շնորհները ներկայացնում են հետևյալ կազմակերպություններից սպասվելիք միջոցները՝

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
ԱՄՆ ՄԶԳ/ԱՌԱ/Մասնագետների զարգացման միավորում	-	868	-	2,211
«ՕքսԵԶեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամ	-	427	-	1,087
Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամ	-	375	-	955
Ընդամենը	**-**	**1,670**	**-**	**4,253**

Ճանաչված եկամուտներն ըստ նվիրատվությունների ստացման աղբյուրների ներկայացված են ստորև՝

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եվրասիա Հիմնադրամ	31,568	32,663	81,610	83,185
Եվրամիությունը՝ ի դեմս Եվրահանձնաժողովի (Համայնքային աղքատության կրճատում «Նոու-հաու»)	-	13,034	-	33,194
Միջազգային հարաբերությունների ազգային ժողովրդավարական ինստիտուտ	-	392	-	998
Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամ	4,490	8,623	11,607	21,961
«ՕքսԵԶեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամ	-	8,542	-	21,754
Ուփսալայի համալսարան	-	7,961	-	20,275
«Կանանց Զարգացման Հիմնադրամ» ՀԴ	-	2,115	-	5,386
ԱՄՆ ՄԶԳ/ԱՌԱ/Մասնագետների զարգացման միավորում	-	2,862	-	7,289
Ընդամենը	**36,058**	**76,192**	**93,217**	**194,042**

Հետաձգված եկամտի մնացորդը ըստ աղբյուրների ներկայացված է ստորև՝

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եվրասիա Հիմնադրամ	-	1,354	-	3,414
Ընդամենը	**-**	**1,354**	**-**	**3,414**

12. Փոխառություններ

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	Ընթացիկ		Ընթացիկ	
	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չապահովված փոխառություններ կապակցված կողմերից	-	13,600	-	34,295
Վերջնական մնացորդ	**-**	**13,600**	**-**	**34,295**

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար		Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	Իրական արժեք		Իրական արժեք		Հաշվեկշռային արժեք		Հաշվեկշռային արժեք	
	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փոխառություններ	-	13,600	-	34,295	-	13,600	-	34,295
Ընդամենը	**-**	**13,600**	**-**	**34,295**	**-**	**13,600**	**-**	**34,295**

Ստորև ներկայացվում են դեռևս չմարված փոխառությունների պայմանները ըստ մնացորդային պայմանագրային մարման ժամկետների: Ժամկետայնության աղյուսակում բացահայտված գումարները պայմանագրային չզեղչված դրամական հոսքերն են:

Հազար դրամ	Արժույթ	Անվանական %	Մարման տարին	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փոխառություններ					
Կապակցված կողմերից	ՀՀ դրամ	0 %	2025	-	13,600
Ընդամենը		**-**		**-**	**13,600**

ԱՄՆ դոլար	Արժույթ	Անվանական %	Մարման տարին	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փոխառություններ					
Կապակցված կողմերից	ՀՀ դրամ	0 %	2025	-	34,295
Ընդամենը		**-**		**-**	**34,295**

13. Զուտ ակտիվներ

Կուտակված արդյունք (անսահմանափակ)

Հիմնադրամի անսահմանափակ արդյունքում ներառված են գործունեության ընթացքում կուտակված գումարները: Հիմնադրամի գործունեության ընթացքում կուտակված արդյունքի գումարների օգտագործմանն առնչվող որևէ օրենսդրական կամ այլ սահմանափակում չկա:

14. Շնորհներից եկամուտ

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հետաձգված եկամտից (Տես.՝ ծանոթ. 11)	36,058	76,192	93,217	194,042
Ակտիվներին վերաբերող շնորհներից (Տես.՝ ծանոթ. 8)	1,143	974	2,955	2,481
	37,201	**77,166**	**96,172**	**196,523**

15. Ծառայությունների մատուցումից եկամուտ

Ծառայությունների մատուցումից եկամուտը ներառում է հաճախորդների հետ կնքված պայմանագրերից ստացված եկամուտը:

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վերլուծություն և գնահատում	58,738	14,387	151,850	36,640
Սոցիալական հետազոտություններ	162,189	125,775	419,291	320,319
Խորհրդատվական ծառայություններ	-	10,347	-	26,351
	220,927	**150,509**	**571,141**	**383,310**

16. Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	(7,701)	-	(19,909)	-
Հետաձգված հարկ	(3,213)	1,762	(8,306)	4,487
Ընդամենը	**(10,914)**	**1,762**	**(28,215)**	**4,487**

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Արդյունք մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	32,868		(15,979)	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2024թ.՝ 18%)	(5,916)	18%	2,876	18%
(Չհարկվող եկամուտ)/չնվազեցվող ծախսեր, զուտ	(4,998)	15%	(1,114)	(7)%
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	(10,914)	33%	1,762	11%

ԱՄՆ դոլար	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Արդյունք մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	84,970		(40,695)	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2024թ.՝ 18%)	(15,295)	18%	7,325	18%
(Չհարկվող եկամուտ)/չնվազեցվող ծախսեր, զուտ	(12,920)	15%	(2,838)	(7)%
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	(28,215)	33%	4,487	11%

17. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

17.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Հիմնադրամն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Շնորհների ճանաչում

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 4.6-ում՝ շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավոր հավաստիացում, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է: Յուրաքանչյուր դրամաշնորհային պայմանագրի համար, Հիմնադրամը գնահատում է, թե որքանով է հավանական, որ այն ամբողջովին կբավարարի դրամաշնորհին կցված պայմանները և շնորհն ամբողջովին կստանա: Նման գնահատում կատարելիս ղեկավարությունը հիմնվում է այդ դոնորի հետ ունեցած նախկին փորձի, նման դրամաշնորհներն ամբողջովին իրականացնելու Հիմնադրամի հնարավորության վրա: Եթե ղեկավարության գնահատմամբ Հիմնադրամն ի վիճակի է բավարարելու դրամաշնորհին կից պայմանները և դոնորը պատրաստ է ամբողջովին Հիմնադրամին փոխանցել դրամաշնորհով նախատեսված գումարները, ապա Հիմնադրամը նման դրամաշնորհն անմիջապես ճանաչում է ֆինանսական հաշվետվություններում (որպես դոնորների գծով դեբիտորական պարտք և հետաձգված եկամուտ)՝ այդ դրամաշնորհի պայմանագիրը կնքելու պահին: Այնուամենայնիվ, եթե ղեկավարությունը սխալվի իր գնահատումներում, ապա կառաջանա ֆինանսական հաշվետվությունները ճշգրտելու անհրաժեշտությունը և այդ ճշգրտումները կարող են էական լինել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների համար:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

18. Ֆինանսական գործիքներ

18.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 4.4-ում:

18.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ				
Դեբիտորական պարտքեր	-	1,670	-	4,211
Մնացորդներ բանկերում	13,318	66	34,922	166
Ընդամենը	**13,318**	**1,736**	**34,922**	**4,377**

Ֆինանսական պարտավորություններ

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ				
Առևտրային կրեդիտորական պարտքեր	2,157	3,447	5,656	8,692
Փոխառություններ	-	13,600	-	34,295
Ընդամենը	**2,157**	**17,047**	**5,656**	**42,987**

19. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:
Հիմնադրամը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Հիմնադրամը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ռիսկերի կառավարման համակարգ

Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը պատասխանատու է Հիմնադրամի ռիսկերի կառավարման համակարգ ներդնելու և այն վերահսկելու համար: Խորհուրդը ստեղծել է Ֆինանսների և աուդիտի հանձնաժողով, որը պատասխանատու է Հիմնադրամի ռիսկերի կառավարման քաղաքականության մշակման և վերահսկման համար: Հանձնաժողովը կանոնավոր կերպով հաշվետվություն է ներկայացնում հոգաբարձուների խորհրդին իր գործունեության մասին:
Հիմնադրամի ռիսկերի կառավարման քաղաքականությունը ներդրվել է հայտնաբերելու և վերլուծելու Հիմնադրամի առջև ծառացած ռիսկերը, սահմանելու ռիսկերի չափն ու վերահսկողությունը, վեահսկելու ռիսկերը և պահպանելու դրանց չափը: Ռիսկերի կառավարման քաղաքականությունն ու համակարգը պարբերաբար վերանայվում է՝ շուկայական պայմանների և Հիմնադրամի գործունեության փոփոխությունները ներկայացնելու համար: Հիմնադրամն իր ուսուցման և կառավարման չափանիշների և ընթացակարգերի միջոցով նպատակ ունի զարգացնել կարգապահ և կառուցողական վերահսկողության միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները կհասկանան իրենց դերերն ու պարտականությունները:
Հիմնադրամի Աուդիտի և Ֆինանսների հանձնաժողովը հետևում է, թե ինչպես է ղեկավարությունը վերահսկում Հիմնադրամի ռիսկերի կառավարման քաղաքականության և ընթացակարգերի համապատասխանությունը և վերանայում ռիսկերի կառավարման համակարգի ճշգրտությունը՝ կապված Հիմնադրամի առջև ծառացած ռիսկերի հետ:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը բխում է գործառնական գործունեությունից:

- ✓ ***Արտարժութային ռիսկ***

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը: Հիմնադրամի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Հիմնադրամի՝ արտերկրյա վաճառքներից և ձեռքբերումներից, որոնք ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով: Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Հիմնադրամին ենթարկում են արտարժութային ռիսկի, ներկայացված են ստորև.

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Հազար ՀՀ դրամ	Եվրո	Հազար ՀՀ դրամ
Ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ	14,679	5,598	-	-
Դեբիտորական պարտքեր	-	-	-	-
	14,679	**5,598**	**-**	**-**
Ֆինանսական պարտավորություններ				
Առևտրային կրեդիտորական պարտքեր	243	93	-	-
	243	**93**	**-**	**-**
Զուտ արդյունք	**14,921**	**5,691**	**-**	**-**

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Հազար ՀՀ դրամ	Եվրո	Հազար ՀՀ դրամ
Ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ	-	-	-	-
Դեբիտորական պարտքեր	2,188	868	-	-
	2,188	**868**	**-**	**-**
Ֆինանսական պարտավորություններ				
Առևտրային կրեդիտորական պարտքեր			5,168	2,139
	-	**-**	**5,168**	**2,139**
Զուտ արդյունք	**2,188**	**868**	**5,168**	**2,139**

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ դրամի 10% աճին/նվազմանը: 10%-ը ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով:

Դրամի արժեզրկումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով կունենա հետևյալ ազդեցությունը.

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն	ԱՄՆ դոլարի ազդեցություն	Եվրոյի ազդեցություն	Եվրոյի ազդեցություն
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Համապարփակ ֆինանսական արդյունք	569	87	-	214

✓ *Տոկոսադրույքային ռիսկ*

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն է շուկայում տոկոսադրույքների փոփոխության հետևանքով: Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում բանկային ավանդների, տրված փոխատվությունների և ստացված վարկերի ու փոխառությունների վրա՝ փոփոխելով վերջիններիս իրական արժեքը (հաստատուն տոկոսադրույքով ֆինանսական գործիքների դեպքում) և դրամական միջոցների արտահոսքերը տոկոսի վճարման գծով (փոփոխուն տոկոսադրույքով ֆինանսական գործիքների դեպքում):

Հիմնադրամը տոկոսադրույքային ռիսկի ենթարկվածություն չունի:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Հիմնադրամի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դեբիտորական պարտքերը:

Ղեկավարության գնահատմամբ դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկը ցածր է, քանի որ Հիմնադրամի փորձը դոնորների հետ ցույց է տալիս, որ Հիմնադրամը հիմնականում ստանում է նախատեսված գումարները:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

	Հազար դրամ		ԱՄՆ դոլար	
	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքներ				
Դեբիտորական պարտքեր	-	1,670	-	4,211
Մնացորդներ բանկերում	13,318	66	34,922	166
Ընդամենը	**13,318**	**1,736**	**34,922**	**4,377**

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հիմնադրամն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները: Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով: Հիմնադրամն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից և դոնորներից ստացման ենթակա շնորհների մասով ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները:

Հազար դրամ 2025թ.	Մինչև 1 տարի	1 ից երեք տարի	3 տարի և ավելի	Ընդամենը
Առևտրային կրեդիտորական պարտքեր	2,157	-	-	2,157
Ընդամենը	**2,157**	**-**	**-**	**2,157**

ԱՄՆ դոլար 2025թ.	Մինչև 1 տարի	1 ից երեք տարի	3 տարի և ավելի	Ընդամենը
Առևտրային կրեդիտորական պարտքեր	5,656	-	-	5,656
Ընդամենը	**5,656**	**-**	**-**	**5,656**

Հազար դրամ 2024թ.	Մինչև 1 տարի	1 ից երեք տարի	3 տարի և ավելի	Ընդամենը
Առևտրային կրեդիտորական պարտքեր	3,447	-	-	3,447
Փոխառություններ	13,600	-	-	13,600
Ընդամենը	**17,047**	**-**	**-**	**17,047**

ԱՄՆ դոլար 2024թ.	Մինչև 1 տարի	1 ից երեք տարի	3 տարի և ավելի	Ընդամենը
Առևտրային կրեդիտորական պարտքեր	8,692	-	-	8,692
Փոխառություններ	34,295	-	-	34,295
Ընդամենը	**42,987**	**-**	**-**	**42,987**

20. Պայմանականություններ

20.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Այս համատեքստում Հիմնադրամն ունի համապատասխան ապահովագրական ծածկույթ. ունի ապահովագրություն (ա) աշխատակիցների առողջության համար և (բ) գույքի համար:

20.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:
Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

20.3 Դատական գործեր

Պետական մարմինների և տնտեսավարող սուբյեկտների կողմից ընդդեմ Հիմնադրամի չեն ներկայացվել այնպիսի հայցադիմումներ, որոնք կարող են էական սպառնալիք հանդիսանալ վերջինիս նորմալ գործունեության համար:

20.4 Պայմանական պարտավորություններ

Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ չունի այլ անձանց տրամադրած երաշխավորություններ, երաշխիքներ և այլ պայմանական պարտավորություններ:

20.5 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ՝ Հիմնադրամը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

21. Կապակցված կողմեր

Հիմնադրամի հետ կապակցված կողմեր են հանդիսանում Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի անդամները և գործադիր տնօրենը:

Հիմնադրամն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ: Կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների մանրամասները հետևյալն են.

ա) Ղեկավարության հետ կատարված գործարքների մանրամասներ.

	Հազար դրամ				ԱՄՆ դոլար			
	Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի		Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Աշխատանքի վարձատրություն	14,134	12,748	1,000	-	36,539	32,466	2,622	-
Չօգտագործված արձակուրդի պահուստ	724	1,905	724	-	1,872	4,804	1,898	-
Առհաշիվ գումարներ	390	127	-	-	1,008	323	-	-

բ) Հոգաբարձուների խորհրդի անդամների հետ կատարված գործարքների մանրամասներ.

	Հազար դրամ				ԱՄՆ դոլար			
	Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի		Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2025թ	2024թ	2025թ	2024թ	2025թ	2024թ	2025թ	2024թ
Ծառայությունների մատուցում	-	508	-	-	-	1,294	-	-

22. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Ճշգրտող դեպքեր կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել հաշվետու ամսաթվից հետո մինչև վավերացման ամսաթիվը ընկած ժամանակահատվածում:

Հաշվետու ամսաթվից հետո՝ 2026թ. փետրվարի 28-ից, սկսվել է ԱՄՆ-ի և Իսրայելի ռազմական գործողություններով պայմանավորված զինված հակամարտություն Իրանի դեմ, որն ուղեկցվում է տարածաշրջանային լարվածության էական աճով: Հայաստանի Հանրապետությունը սահմանակից է Իրանին, ուստի ստեղծված իրավիճակը կարող է բացասաբար ազդել տնտեսական միջավայրի և շուկաների վրա՝ պայմանավորելով անկայունություն, սահմանափակումներ և խափանումներ միջազգային փոխադրումների, մատակարարումների, գնագոյացման և ֆինանսական շուկաների ոլորտներում: Ղեկավարությունը գնահատում է, որ տվյալ իրադարձությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմված ֆինանսական հաշվետվությունների համար հանդիսանում է չճշգրտող դեպք, իսկ հնարավոր ազդեցության չափը հաշվետվությունների թողարկման պահին վստահելի կերպով քանակապես գնահատել հնարավոր չէ՝ իրադարձությունների շարունակականության և բարձր անորոշության պատճառով: